

ԸՆՏԱՆԵԿԱՆ ԿԵԱՆՔ

Ընտանիքի մէջ ամենից յարգուածը մայրն է: Մօր անմիջական իրաւասութեան տակ է գտնուում ընտանիքի ներքին կառավարութիւնը, ընտանիքի ղեկը: Նա վերին աստիճանի աշխատասէր է և գործունեայ, իւր անձնական օրինակով նա ազդում է ընտանիքի միւս անդամների վրայ: Մայրը միաժամանակ հրամայում է հարսներին, աղջիկներին, թոռներին և թէ հասակն առած, ամուսնացած որդիներին: Ընտանիքի մէջ ոչինչ ծածուկ չէ նրանից. նրա սուր աչքը տեսնում է ամէն ինչ. նա գիտէ ամէն մի գաղտնիք, բայց և վերին աստիճանի գաղտնապահ է: Նա դէպի իւր ամուսինը շատ զգուշ է և միմիայն ամենակարեւոր տեղեկութիւններն է հաղորդում կամ նրա հետ խորհրդակցում: Այդ պատճառով ընտանիքի անդամները իրենց կարիքները կամ սրտի դարդերը համարձակ յայտնում են մօրը, հաստատ հաւատացած լինելով, որ տան միւս անդամները չեն իմանալ անդ:

Հայրը այստեղ համարւում է մի հիւր, կամ աւելի լաւ է ասել, մի մշակ, որ աշխատում է դրսում, լցնում է տունը ամէն տեսակ բարիքներով, այդ բոլորը յանձնում է կնոջը և հաշիւ չէ պահանջում ընտանիքում տեղի ունեցող ծախսերի մասին, հաստատ հաւատացած լինելով, որ կինը աւելի ժլատ է քան ինքը: Սակայն հայրը տան մէջ մի խորհրդաւոր անձնաւորութիւն է, նրա տան եղած ժամանակ ընտանիքում տիրում է սրբազան լուծութիւն, հարսերը ծածկում են երեսները, աղջկերքը քաջւում են մի անկիւն և իրենց բանին կենում, ամուսնացած տղամարդիկ իսկոյն հեռացնում են իրենցից զաւակներին, որպէս զի հայրը չտեսնէ և նախատի *):

*) Որդին կամ հարսը մեծ ամօթ են համարում հօր ներկայութեամբ երեխային գրկել և դդուել, ուստի նրա ներս գալուն պէս երեխային յանձնում են տան պառաւին կամ աղջկան:

Հօր ու մօր այս յարգանքը տևում է մինչև նրանց ծերութիւնը: Հետզհետէ ծերանալով նրանք կորցնում են և իրենց գիւրքը: Որդիներն այլ ևս չեն լսում ծնողներին: Հարսները ջողաբ (խօսքին-խօսք բերել) են տալիս, շատ անգամ ծաղրում, ծիծաղում: Նոյն իսկ ամենաբռնակալ հայրը ծերանալով և ուժից ընկնելով, խոնարհւում, մեղմանում է և ակնածում որդիներից ու հարսներից:



Վարանդեցի հայ կին

Հօրն ու մօրը քիչ ու շատ յարգում են այն ժամանակ, երբ երկուսն էլ կենդանի են: Նրանց կենդանութեան ժամանակ որդիները կամ հարսները ոչ մի գոգոհութեան նշան չեն ցոյց տալիս: Իսկ մէկը կամ միւսը դրանցից պակասելով, կարծես պակասում է և կենդանի մնացածի յարգանքն ու իրաւունքը: Այս է պատճառը, որ ծերունիները

յաճախ կրկնում են «Աստուած, էնքան մեր խեղանը պահիս, չը քորանը ես մեռնիմ, հարսին նան տղի ումուդ չընգնիմ»:

Կինն էլ ասում է ամուսնուն. «Քու շոքը ոչ պըկասի իմ գլխան. թա չէ տղերքդ նան հարսներդ ինձ սաղ սաղ կուլ կտան»:

Աշխատանքի անընդունակ մարդուն տան անդամները հաւասարապէս ատում են, նրա գոյութիւնը ձանձրոյթ է պատճառում ամեն մի անդամին: Մանաւանդ վերջինիս գոյութիւնն անտանելի է, երբ իրենց կենդանութեան ժամանակ ընտանիքի անդամներից մի ջահիլը մեռնում է: Ամէնքը կշտամբում են ծերունուն, ամէնքն էլ վրան գոռում են. «Քաւթառ գըլխակեր, էնքան կըննական ըս, որ լոխչիս գըլխըներն օտիս ետաւ գիօրբագիօռ ընիս»: Խեղճ ծերունին ակամայից լռում է և ոչինչ չի պատասխանում, կարծես ինքն էլ խոստովանում է, որ շատ է ապրել:

Սովորութիւն կալ, երբ այդ տեսակ երկարակեաց ծերունին մեռնում է և եթէ նրա մահից յետոյ ընտանիքի անդամներից մէկն ու մէկը հիւանդանում է, գնում են մեռած ծերունու գերեզմանը փորում, գլուխը մարմնից բաժանում և աչքի մէջ մի փայտ տնկում, որպէս զի հիւանդն էլ չմեռնի: Ասում են իբրեւ թէ աչքը տան վրայ է գնացել և մինչև ընտանիքի անդամներից մէկին չտանի, չի հանգըստանալ: Գլուխը մարմնից բաժանելով իբրեւ թէ ազատւում են այդ փորձանքից:

Հօր մահից յետոյ ընտանիքի կառավարութեան ղեկը անմիջապէս անցնում է մեծ որդուն. եթէ վերջինս չունի ոչ մի պակասութիւն և շատ փորձուած է, իսկ եթէ անընդունակ է և գիրք չունի թէ տանը և թէ հասարակութեան մէջ, այս դէպքում կառավարութիւնն անցնում է միւս եղբայրներից ամենից ընդունակի ձեռքը:

Ընտանիքի գլուխը հօր մահից յետոյ համարւում է մեծ որդին, թէև չունի այն լայնածաւալ իրաւունքները, ինչ որ հայրն ունէր: Մեծ եղբայրը յարգուած է ընտանիքի անդամներից հաւասարապէս: Նա միմիայն կատարում է թեթև աշ-

խատանքներ և տարուածոյ մեծ մասը տանն է լինում:

Այնուհետև նա համարւում է հասարակութեան մի պատուաւոր անդամ (աղսախկալ) և միջամտում է հասարակական գործերում: Նա հաճնւում է պատշաճաւոր և մաքուր և որ գլխաւորն է՝ շինամէջ (շնամաջ) դուրս գալիս հազած պիտի լինի կօշիկներ (չմշկներ), որից զրկուած են միւս եղբայրները:

ԱԶԳԱԿՑՈՒԹԵԱՆ ԱՍՏԻՃԱՆՆԵՐ

Տատի մօրը	ասում են—	Պապունց ալան:
Տատին	»	Տատի, ալան, մեծազի, նանի:
Մօրը	»	ազի, աքա, սիրուն նան, կամ ուղղակի տալիս են անունը:
Հօրեղբօրը	»	Ամի, պիծ ամի, զիզ ամի:
Հօր եղբօր կնոջը	»	Հարս, աքեր, հասի
Մօր եղբօր կնոջը	»	Քուակին:
Մօր եղբօրը	»	Դալի, քեռի:
Հօրաքրոջը	»	Հաքուր, աքեր կամ տալիս են անունը:
Մօրաքրոջը	»	Մաքուր, աքեր և անունը:
Քրոջը	»	Բաջի, աքուր կամ անունը:
Եղբայրը եղբօրը	»	Բաբա, ապա, ապեր, օր. Մակիչ բաբա, պիծ ապա, մեծ ապա:
Կնքահօրը	»	Պելի, խըչաղբեր:
Կնքամօրը	»	Պլակին, սընամար:

Խ Ն Ա Մ Ո Ւ Ն Ք

Կնոջ հայրը	կոչւում է—	Աներ, հաներ:
Կնոջ մայրը	»	Զոքանջ, զենք, ւջ:
Ամուսնու հայրը	»	Պատրոն:
Ամուսնու մայրը	»	Սկեսուր:
Ամուսնու եղբայրը	»	Տեգր, Տագըր:
Ամուսնու քույրը	»	Տալ:

Ամուսնու եղբոր կինը կոչում է—Տըգրակին:

Կնոջ քուրը » Գենի:

Կնոջ եղբայրը » Հընըր տղայ:

Կնոջ քրոջ մարդը » Բաջանաղ:

Հարսի համար ամուսնու ազգականները կոչում են պատրո-
նենք, իսկ փեսայի համար հարսի բարեկամները աներանք:

Կինը ամուսնու մասին խօսելիս, սկեսրոջ առաջ կոչում է՝
տղադ. տալին՝ քու ախպէր, տեգրկնոջ՝ քու տագըր, իր ծնողների
առաջ՝ փեսադ, ուրիշների առաջ՝ ինքը, մեր մարդը, մեր հալը, մեր
տղամարդը, Առաքելին հարը (որդու անունով), Սընամանց տղան
(աղզանունով), իմ տանը և այլն, իրեն կոչում է աղա:

Ամուսինը կնոջը կոչում է, իր ծնողների առաջ՝ հարսը, կամ
ծագումով, օր. Բըղղըսարէն թոռնը, Գևուն աղջիկը: Աներոջ մօտ՝
աղջիկդ, օտարների առաջ՝ մեր խիզանը, մեր տանըցին, կողակիցս
այս ինչի թոռը կամ աղջիկը, կնոջը՝ ախչի:

Ընդհանրապէս Վարանդայում գերդաստանները բազ-
մանդամ չեն: Շատ հազիւ է պատահում, որ մի քանի եղ-
բայրներ երկար ժամանակ միևնոյն յարկի տակ միասին ապ-
րեն: Եղբայրները ամուսնանալուց կարճ ժամանակ լետոյ բա-
ժանւում, նոր գերդաստուն են կազմում: Ծնողները ապրում
են կամ ամուրի կամ նոր ամուսնացած որդու մօտ: Բազ-
մանդամ են լինում միմիայն երկրագործութեամբ պարապող
ընտանիքները և սա էլ ունի իւր յարգելի պատճառը: Երկ-
րագործութեամբ պարապելու համար հարկաւոր են շատ
աշխատաւոր ձեռքեր, ուստի եղբայրները ստիպուած ապ-
րում են անբաժան:

Բաժանուելու գլխաւոր պատճառը տեգրկնիկներն են
լինում: Վերջիններս ապրում են միմեանց հետ շատ ան-
հաշտ. օր չի լինիլ, որ մի որև է պատճառով երկու տեգրկնիկ
միմեանց հետ չկուռեն, մանաւանդ վերջիններիս մէջ շատ
զարգացած է նախանձը, այսպէս օրինակ ասում են. «տեգ-
րակինը տեգրակընկան օձին ծակին կօզի», այսինքն չի ու-
զենալ, որ նա բաղդաւոր և ուրախ ապրի, այլ միշտ նեղու-
թեան և թշուառութեան մէջ: Բազմաթիւ օրինակներից ա-
ռաջ բերենք ժողովրդական մի ասացուածք, որը շատ պարզ

բնորոշում է ընտանիքի անդամների միմեանց հետ ունեցած յարաբերութեան չափը:

Պատմում են, իբրև թէ մի հարս հիւանդ ժամանակ աղերսական ձայնով դիմում է ընտանիքի անդամներին և մի գդալ ջուր ուզում՝ ասելով.

Սկեսուր, սկեսուր, սկսրհան
Սերտս էրեց մի գոօլ ջուր.

—

Պատրոն, պատրոն, պտրհան (սլահարան),
Սերտս էրեց մի գոօլ ջուր.

—

Տալիկ, տալիկ, սեւ սալիկ
Սերտս էրեց մի գոօլ ջուր.

—

Տեգրակին, տեգրակին, օծին ծակին
Սերտս էրեց մի գոօլ ջուր.

—

Նշանած, նշանած, Ըստրծու խըզըհանած
Սերտս էրեց մի գոօլ ջուր:

Սակայն այնքան քարեսիրտ են լինում, որ ոչ մէկը դրանցից ջուր չի տալիս իրեն մինչև ամուսինը գալիս է և հիւանդը դիմում է նրան ու ջուր խնդրում: Ամուսինը տալիս է ջուրը և նա խմելուն պէս մեռնում է: Այստեղից երևում է, որ ընտանիքի մէջ ամենից սիրելին իր ամուսինն է:

Յաճախ սկեսրոջ և հարսերի մէջ կռիւներ են պատահում, որ շատ անգամ տուր ու դմբոցով է վերջանում:

Կռուի պատճառները լինում են.

Ա. Երբ սկեսուրը մի հարսին աւելի է սիրում, յարգում և պաշտպանում քան միւսին:

Բ. Երբ մի թուղան սիրում է աւելի քան միւսին, մայրական խնամք է տանում, լաւ հագցնում է և իւր «ազիզ բալա», այսինքն միակ սիրելի որդի է կոչում: Միւս մայրերը նախանձում և սկեսրոջ հետ կռւում են:

Գ. Երբ մի հարս շատ աղջիկ է բերում: Այս դէպքում ոչ թէ միայն սկեսուրն է հարսի հետ կուռում և նրան սկսում ատել, այլև ընտանիքի միւս անդամները, մինչև անգամ իւր ամուսինը սկսում են վատ աչքով նայել նրան և կծու խօսքերով սիրտը խոցոտել: Սկեսուրն անտանելի հայհոյանքներ, անէծք է թափում հարսի գլխին. «Քու հօր տօնը պրիշակ մնայ, խօխէս տօնը քընդըլական ըս»: Աչքալոյս, կերուխում, կնուռքի խնջոյք տեղի չեն ունենում այս դէպքում: Իարեկամները, աչքալոյսի փոխարէն, մխիթարում են ծնողներին. «Աստուծ ձեզ պահի, վնաս չօնի, եկող տարի էլ մի ղոչ տղայ կը բերիս»: Խեղճ կինը կարծես մահուան ոճիր գործած, լսում է իւր դատաւճիռը և լուր-թեամբ տանում ընդհանուրի այդ նախատինքը:

Վարանդայում աղջիկ բերելը մի դժբաղդու թիւն է համարում: Շատ դէպքեր են պատահել, որ մի քանի աղջիկ բերող կնոջ դուրս են արել տանից:

Աղջիկը ծնուած օրից մինչև իր մահը ծնողների համար մի ծանր բեռ, մի մեծ հոգս է մանուկանդ աղքատ ընտանիքների համար. պատահում է, որ աղջկերքը սնանկացնում և վերջին չքաւորութեան մէջ են ձգում իրենց ծնողներին:

Ծնողները ստէպուած են աղջիկներին լաւ հագցնել և հագուստի վրայից կախել արծաթէ կամ ոսկէ դրամներ ամենաքիչը 20—30 ռ. արժողութեամբ, այդ դրամները աղջիկը պսակուելիս տանում է իւր հետ: Վարանդայում աղջիկը շատ վաղ է նշանւում, համարեա 5—6 տարեկան հասակում շատերին նոյն իսկ օրօրոցում են նշան դնում (օրօրոցը խազում): Նշանած մնում են 6—7 երբեմն աւել տարիներ: Այսքան երկար ժամանակամիջոցում երկու կողմի խնամիները միմեանց հետ բարեկամութիւն են անում, փոխադարձաբար միմեանց հիւրասիրելով և օգնելով: Բայց ծանրութիւնը ընկած է աւելի աղջկայ ծնողների վրայ:

Աղջկայ ծնողները յաճախ հրաւիրում և հիւրասիրում են փեսայի ծնողներին կամ բարեկամներին:

Ամէն նշանաւոր տօն օր ստիպուած «խօնչա» են ուղարկում խնամոնց տուն, որը բաղկացած է լինում գլխաւորապէս գաթալից, հալուալից, հաւերից, մեղրից, գինուց, արաղից և այլն, արժողութեամբ 1—3 ըուբլի: Խնամոնց կողմի բարեկամներից եթէ մէկը պսակուելու լինի, աղջկայ տէրը պէտք է «խօնչա» տանի, «խալաթ» տայ և հարսանիքի ժամանակ «կանչ» (դրամական նպաստ) անի: Այս բոլորը մօտաւորապէս արժեքնում է 10—15 ը.: Բացի դրանից աղջկայ տէրը օգնում է իւր խնամուն վարելու, ցանելու, հնձելու, կալսելու և այլ ժամանակ. իսկ կանայք բուրդ գզելու, մանելու, գործելու կամ թէ թուր թափելու, արտը քաղհանելու ժամանակ առանց վարձատրութեան հաւասար աշխատում են խնամոնց հետ: Այսքանը մինչև հարսանիքն է: Հարսանիքի ժամանակ աղջկայ ծնողները բուլականին ծախք են անում, լաւ բաժինք և փեսային արծաթէ գօտի խալաթ են տալիս, իսկ փոխարէնը շատ չնչին կանչ են վերցնում:

Վերև լիշածներիցս պարզ երևում է, թէ որքան ահագին ծախք են անում ծնողները և այդ բոլորը դեռ մէկի համար. իսկ եթէ ենթադրենք թէ մէկի փոխարէն մի քանիսն են, այն ժամանակ երևակայելի է ծնողների դրութիւնը: Պատահում է, որ միաժամանակ նշան են դնում մէկ, երկու և երբեմն երեք աղջկայ և ծնողները ստիպուած են լինում երեք տան հետ բարեկամութիւն անել:

Այս է պատճառը, որ Վարանդայում աղջիկ բերելը տնաքանդութիւն է համարւում և յաճախ կռիւների պատճառ դառնում: Ընդհակառակը, երբ հարսը տղայ է բերում, ամբողջ ընտանիքում ցնծութիւն և ուրախութիւն է կատարւում, տեղի են ունենում աչքալուսէք, խնջոյք, կերուխում: Տղաբեր հարսին զանազան խալաթներ են տալիս. «Մէջքդ կանանչ կենայ» կրկնում է ամէն մի եկող: Սկեսուրը տղաբեր հարսին խնամում է և լաւ կերակրում: Սկեսրոջ այդ վարմունքը միւս հարսերի նախանձը շարժում է և կռուի պատճառ է դառնում:

Դ. Զբերքութեան պատճառով ևս կռիւներ են ծագում

հարսի և սկեսրոջ մէջ: Երբ հարսը չբերք է, սկեսուրը այս դէպքում աւելի չարանում և շարունակ անիծում է: «Ծոխդ կտրէ հունց վէր իմ խօխէն ծոխը կտրեցիր, ա՛յ չոր տառեխ: Անէծքը դեռ բաւական չէ, երբեմն էլ հարսին դուրս են անում տանից, փոխարէնը ուրիշ հարս կամ աղջիկ բերելով, կամ թէ խղճում են և չեն ուզում տանից դուրս անել, միայն երկրորդ կին են բերում, որպէս զի երեխայ բերի և որդին անժառանգ չմնայ *): Երկրորդ կնոջ երեւան գալը պատճառ է դառնում կռիւների ու տուրուղմբոցի, որ տեղի է ունենում ապօրինի և հարազատ կնոջ միջև, կամ թէ սկեսրոջ հետ: Վերջինս աւելի պատւում, մեծարում է ապօրինի հարսին և ընդհակառակը հարազատ հարսից միշտ գանգատւում է որդուն: Այստեղից յառաջանում է անվերջ կռիւներ և երկպառակույթիւններ: Հարազատ կինը այլ ևս չկարողանալով տանել այդքան զրկանք ու նախատինք, թողնում ու հեռանում է:

Ե. Հարսի ծածուկ մի տեղ գնալը կամ մի բան ուտելը, իւր պարտականութեան մէջ ճշտապահ չլինելը կամ վերջապէս օտար մարդու հետ խօսելը կռիւների պատճառ են դառնում:

Սկեսուրը հարսի հետ կռուելիս անտանելի հայհոյանքներ է թափում, գլխաւորապէս ծնողների հասցէին, օր. «Քա մօր մադարը կտրէ, որ քեզ նմանը ինձանաւ քցից»։ «Քու հար շոն դառնայ»։ «Քա մօր մարդը մեռնի»։ Հարսը լսում է այդ բոլորը և համբերում, նա ոչ մի դժգոհութեան նշան ցոյց չէ տալիս, մանաւանդ երբ նորահարս է: Մի քանի տարուայ հարսը այդ տեսակ դէպքում կամ քթի տակին

*) Պատահում է երբեմն մինչև չորս կին են սլահում, միայն թէ երեխայ ունենան:

Թաղլար գիւղում մի դարբին, որ ունէր մեծ հարստութիւն, պահում էր չորս կին, բայց ոչ մէկից երեխայ չունէր. փորձում է բերել հինգերորդը: Այս վերջինը լղանում է, բայց դարբնի բարեկամները կամենալով նրա հարստութեան տիրանալ, լղի կնոջը խեղդում են և խեղճ դարբնին թողնում անժառանգ:

փնթփնթում է և դրանով արտայայտում իւր գոհակամարտութիւնը կամ ուղղակի պատասխանը դարձնում է և սկեսրոջ հայհոյում:

Ընդհանրապէս հարսերը շատ ամօթխած և համբերատար են լինում: Սկեսրոջ անտանելի վարմունքը, զրկանքը, անէծքն ու ծեծը հարսը լռելեայն տանում է և ոչնչով չի փոխարինում, միայն, ինչպէս ասում են, «գանակը ոսկուն» հասնելուց յետոյ, այլ ևս չի համբերում և «ջողաք» է տալիս: Պատճառ որ Վարանդայում աղջիկը շատ շուտ են մարդու տալիս: 13 տարեկան հասակում ամուսնանալը սովորական երևոյթ է այստեղ: Մատաղ հասակում աղջիկը զրկուելով ծնողների խնամակալութիւնից և ընկնելով իրեն բոլորովին անծանօթ մի ընտանիք, կորցնում է իւր ազատութիւնը և համարձակութիւնը: Նա դատապարտւում է լուրթեան և անվերջ համբերութեան: Սկեսուրը հայհոյում է, մազերը քաշում, մինչև անգամ ծեծում, հարսը համբերում է և չի համարձակուած ամուսնուն գանգատուել, իսկ եթէ փորձում է գանգատուել, փոխարէնը կամ հայհոյանք և կամ ծեծ է ստանում: Մինչև անգամ, երբ աղջիկը լուսահատուած դիմում է իւր ծնողներին և իւր վիճակի մասին գանգատում, վերջիններս ոչ միայն չեն ուղղում լսել նրա գանգատը, այլև նախատելով յետ են ուղարկում սկեսրանց տուն, առարկելով, թէ հարսը պէտք է համբերէ:

Հարսը բացի տեղեկներին և տալերի հետ խօսելուց, ուրիշների հետ երկար ժամանակ անխօս է մնում:

Սկեսուրի հետ չի խօսում մինչև երեխայ բերելը *): Կեսրարի հետ մինչև մահը, իսկ եթէ սա ցանկանում է, որ հարսը իւր հետ խօսի, մի ընծայ է տալիս և հետը

*) Պատմում են, թէ Նալի կինը հարցրել է իւր հարսերին, թէ ինչո՞ւ թոնիրը չեն վառել. արանցից մինն էլ պատասխանել է, թէ թոնրի միջից ջուր է դուրս գալիս: Աստուծոն շատ անհաճոյ է եղել, որ հարսը համարձակուել է սկեսուրի հետ խօսել, ուստի և՛ հրամայել է, որ տալից ջուրը բարձրանայ և ջրհեղեղ լինի: Պատմող կինը սատակի լարձակում էր շուշեցի հարսերի վրայ, որոնք խօսում են իրենց սկեսուրների հետ:

խօսեցնում, բայց դա լինում է այն ժամանակ, երբ հարսը տղային կամ աղջկանը պսակում է:

Տեգրի հետ մնում է անխօս մինչև 10 տարի և խօսում է միմիտյան տեգրի հաճութեամբ. կնքահօր հետ մինչև մահը, կնքահօր կողմի բարեկամներից ամենափոքր երեխայի հետ նույն խոսք անխօս է մնում:

Գերդաստանի մէջ ամենից շատ կուռում են տեգրկնիկները:

Կռիւր ծագում է հետևեալ պատճառներից.

Երբ մէկը իւր երեխայի համար նոր հագուստ է կարում, միւսը ոչ, մանաւանդ երբ հարսներից մէկը երեխայ չի ունենում և պահանջում է, որ նոր կտորից իրեն ևս բաժին տան:

Երբ լուացքի ժամանակ մէկը շատ լուացք է անում, միւսը քիչ:

Երբ մէկին շատ են բանեցնում միւսին քիչ:

Երբ մէկը ճակատին ոսկէ զրամներ է շարում, միւսը ոչ:

Երբ տեգրկնիկը ծածուկ մի բան է կատարում և միւսները լայտնում են իրենց ծնողներին: Երբ մէկի օժիտը շատ են բանեցնում, միւսինը քիչ:

Երբ մէկն ունենում է մի կամ մի քանի փեսայ և նրանց ծածուկ ուտեցնում, խմեցնում է:

Երբ մէկի ամուսինը ծածուկ սիրում է տեգրկնիկներից մէկին և ինքն իմանում է:

Կռուելու ժամանակ միմեանց հայհոյում են. «Պոչերդ կտորիմ», «Ծամերդ տըխտակին սանրիմ», «Աչքդ հըրթըլուսին մնայ, ետքդ ճըլկուտրին փոսին», «Ծծերաւդ չանգալընկին», «Քանց ջուր շատ քըրըքար կեաս», «Մին ծըկիս, հըղեր փքիս», «Հանց օրի կեաս, օրին ծննդականը թըմաշա կեայ»:

Ամուսինների մէջ ևս կռիւներ են պատահում, բայց ոչ այնքան ստեպ, սակայն նույն ծեծը, նույն կռիւը, նույն հայհոյանքը տեղի է ունենում և այստեղ:

Առաւելապէս կուռում են

Երբ կինը ծածուկ սիրած է ունենում և ամուսինն իմանում է:

Երբ սկեսրոջ հետ «եօլա» չի գնում և սա գանգատւում է որդուն:

Երբ աղջկալ ծնողները խոստացած օժիտը չեն տալիս կամ ձգձգում են:

Երբ ամուսինը օտարութիւնից դառնալով իմանում է, որ կինն իրեն դաւաճանել է:

Երբ մարդն ուզում է կնոջ բերած գորգը կամ կապերտը ծախել և պարտքը տալ, կինը հակառակում է և թոյլ չէ տալիս:

Երբ ընտանիքի միւս անդամները շատ են վիրաւորում և վշտացնում կնոջը և վերջինս մի քանի անգամ գանգատւում է ամուսնուն և բաւականութիւն չստանալով թողնում, գնում է հօրանց տուն:

Ամուսինը գնում է մի կերպ համոզելու և տուն բերելու, կինը դիմադարձութիւն է անում և չի համաձայնւում, այստեղ ամուսինը դիմում է ծեծի և բռնութեամբ տուն բերում:

Աշխատանքն ընդհանրապէս ընտանիքի անդամների մէջ չէ բաժանուած: Բուրդ գզել, մանել, գորգ ու կապերտ գործել, այս և սոյնանման գործեր կատարում են միասին և ոչ ոքի մասը որոշուած չէ: Որոշուած են միմիայն հետեւեալ աշխատութիւնները.

Կերակուր եփելը և հաց թխելը սկեսրոջ պարտքն է. տուն աւելն ու ջուր բերելը աղջիկն է կատարում, տղամարդկանց գլուխն ու ոտները լուանում է հարսներից փոքրագոյնը, իսկ կով կթել, խնոցի հարել, խմոր հունցել և այլ նման գործեր կատարում են միւս հարսերը:

Բայց վարանդացի կնոջ գործունէութիւնը դրանով չի վերջանում: Բացի տնային գործեր կատարելուց նա օգնում է նաև իւր տղամարդին դաշտումը:

Դիւղացի կինը աշխատանքի տեսակէտից ոչնչով լեւ չէ մնացել իւր ամուսնուց: Նա կատարեալ տնտես է տան և

Ժրաջան մշակ դաշտումը: Տան աշխատանքը վերջացնելուց յետոյ, նա շտապում է դաշտը: Պէտք է տեսնել, թէ ինչ-պէս նա մանգաղը ձեռին հնձում է արտը և խուրձեր կապում, խուրձերը կրում կալը, աշան անում, կալը կալսում, թեղում, ցորենը շուտում, ջրաղաց տանում, ալիւր պատրաստում: Արտը քաղհանում, խոտը հարում, չորացնում և դիզում: Այդ դեռ բաւական չէ, այգում ևս թուփ թափելիս կամ խաղող քաղելիս հաւասար աշխատում է իւր ամուսնու հետ: Մինչև անգամ անտառ է գնում փայտ բերում, պտուղներ ժողովում: Ահագին դաճանակը ուսին տաւարը կամ ոչխարը պահում: Մի խօսքով կինը գիւղացու համար իւր անբաժան ընկերը, իւր աջ կուռն է: Նա մինչև անգամ կուռի ժամանակ ահագին դաճանակը ձեռին պաշտպանում է իւր ամուսնուն: Դաշտային աշխատանքն երբէք չի խանգարում գիւղացի կնոջ իւր տնային գործերը կատարելու: Նա այդ բոլոր գործերի համար ժամանակ է գտնում: Ուշ գիշերը, մինչդեռ ամէնքն օրուայ աշխատանքից յոգնած հանգիստ են առնում, կինը նստած ճրագի աղօտ լոյսի տակ կամ տղամարդի պատռոտած շորերն է կտրկատում, կամ երեխաների համար գուլպայ գործում, պատռածը կարում, կեղտոտ շորերը լուանում, մաքրում:

Եթէ ժամերով որոշելու լինինք նրա աշխատութեան չափը, կարելի է ասել, որ նա ամառը բանում է օրեկան 18 ժամ, և հանգստանում է միմիայն 6 ժամ: Գիւղացի կինը մինչև անգամ չի հանգստանում կիւրակէ և տօն օրերը:

Սակայն այդ բոլոր աշխատանքը նա կատարում է առանց յոգնելու, առանց մի փոքր տրտունջ յայտնելու: Նա գիտէ, որ իւր ամուսինն այդքան աշխատութիւնը միայնակ չի կարող կատարել, ուստի օգնութեան է հասնում և ո՞վ կարող է ասել, թէ դա մի թույլ արարած, մի քնքոյշ կին է:

Ամառը մարդու չափ աշխատում է, ձմեռը գորգ ու կապերտ (որ շատ տարածուած է գաւառիս բնակիչների մէջ) է գործում, վաճառում, հարկ ու բեգառը վճարում, տան

կարիքները հոգում: Այսքան մեծ է վարանդացի կնոջ կոչումը և աշխատանքը, բայց և այնպէս ոչ մէկը չի գանգատւում, այլ կատարում են միասին և սիրով:

ԲԱՐՈՅԱԿԱՆ ՈՒԹԻՒՆ

Բարոյականութիւնը հետզհետէ ընկնում է այս գաւառում: Այժմ շատ գիւղերում, համարեա առանց բացառութեան, բոյն է դրել այդ վարակիչ ախտը և հետզհետէ տարածւում է շրջակայ բնակիչների մէջ:

Վարանդան, որ սրանից տասնեակ տարի առաջ ներկայացնում էր մի կուսական երկիր, ուր թագաւորում էր բարոյականութիւնն ու անարատ սէրը, այժմ նահապետական այդ պարզ ժողովուրդը սկսել է արդէն անբարոյականանալ: Վարանդացի կիներ, որ գիտէր հաշտուիլ ամէն տեսակ դառն պայմանների հետ և բացի իւր ամուսնուց ուրիշին չէր ճանաչում, այժմ սիրում է պճնուիլ և ջահելներին դուր գալ: Անբարոյականութիւնը տարածուած է գլխաւորապէս Թաղավարդ, Աւետարանոց (Չանախչի), Թաղլար, Գիշի, Չարտար, Քաթուկ և Նախիջևանի կ գիւղերում: Անբարոյականութեան տարածման գլխաւոր պատճառները կարելի է համարել, նախ՝ պանդխտութիւնը, որ սաստիկ տարածուած է գաւառիս բնակիչների մէջ: Գլխաւորապէս պանդխտում են Բագու, Ղազախ, Պետրովսկ և Անդրկասպեան երկիրները: Վարանդացուն տակաւին նոր ծանօթ այդ երկիրները, մանաւանդ Բագուն իւր նաւթահորերով գրաւել և գերել է իրեն: Օտար երկրների հարստութիւնից շլացած, վարանդացին ծախում է իւր եզն ու գոմէշը, այգին ու արտը և դիմում հարստութեան ու ախտերի այդ բոյները: Տարիներով նա քաշքաշւում է այդտեղ, երեսի վրայ թողնելով ջահել կնոջն ու երեխաներին: Նա գրաււում է օտար աշխարհի գեղի կեանքով, ընկնում է այդ հոսանքի մէջ և վերջ ի

վերջոյ կամ կուլ է գնում, կամ թէ չոր կմախք դարձած ու զանազան ախտերով վարակուած տուն դառնում: Խեղճ կինը տարիներով սպասում է իւր աճուսնու վերադարձին, համբերութեամբ տանում է ամէն տեսակ զրկանք, նա քամում է դառնութեան բաժակը մինչև վերջին կաթիլը, միայն թէ չի ուզում դաւաճանել իւր ամուսնուն, նրան, որի հետ կապել է իւր բաղդը, իւր պատիւն ու կեանքը:

Սակայն բնութեան այս թույլ արարածը երկար չի կարողանում դիմանալ: Շարունակ լուրեր է լսում, իբրև թէ իւր ամուսինը օտար կին է պահում և մտադիր չէ տուն դառնալու, կամ թէ թղթախաղով և արբեցողութեամբ վատնում է իւր վերջին կոպէկը:

Այդ տեսակ աննպաստ լուրերը, ամուսնու անտարբերութիւնը դէպի իւր ընտանիքը, քաղցը և վերջապէս կրքերը դուրս են հանում կնոջ իւր առագաստից և ձգում փողոց: Անօգնական կինը որոնում է իւր բաղդը առաջի հանդիպած մարդու մէջ և ակամայից զոհւում.....:

Բ. Երկրի դիրքը: Առհասարակ նկատուած է, որ այգեշատ տեղերում շատ է տարածուած անբարոյականութիւնը:

Գ. Գործարանները: Սա կարելի է համարել անբարոյականութեան բուն աղբիւրը: Վարանդայի շատ գիւղերում կան մետաքսի գործարաններ, ուր տղայ և աղջիկ թուով մօտ 100 բանում են միասին: Հսկողութիւնն այստեղ շատ թույլ է, մանաւանդ, որ գործակատարները նոյնպէս ջահել և ամուրի երիտասարդներ են լինում:

Ազատ ծնողների հսկողութիւնից՝ աղջիկները առում, խօսում և կատակներ են անում տղաների հետ և հետեւանքն այն է լինում, որ ճարպիկ տղաները շատ հեշտութեամբ կարողանում են մոլորեցնել աղջիկներին: Գործարանն ունի մի առանձին բաժանմունք, որտեղ բանում են միմիայն պառաւ կանայք. այդ պառաւները նոյնպէս մեծ դեր են խաղում աղջիկների մոլորեցնելու գործում՝ միջնորդի դեր կատարելով:

Դ. Ներկարարները, որոնց խանութը կանայք ազատ մուտք են գործում:

Ե. Մանրավաճառները, որոնք շարունակ տնէ-տուն շրջում են և առևտուր անում, գլխավորապէս կանանց հետ:

Զ. Տատմայրները, որոնք միջնորդի դեր են խաղում և շատ անգամ մոլորեցնում կանանց:

Է. Տեղային երաժիշտները:

Ը. Զօրքը:

Կանայք ևս նպաստում են անբարոյականութեան տարածման:

Վարանդայում գլխավորապէս ջահել աղջիկներին ամուսնացնում են հասակն առած մարդու հետ և երբ կինը հասնում է իւր արբունքին, մարդն արդէն ծերացած է լինում և սա պատճառ է դառնում կնոջ շեղուելու ճանապարհից և սիրելու աւելի ջահելներին:

Գիւղի ջահելները զանազան միջոցներով աշխատում են գեղեցիկ հարսներին ձեռք ձգել, մանաւանդ երբ վերջիններիս ամուսինները բացակայում են գիւղից: Զահելները մի տեսակ պարծանք և քաջութիւն են համարում, որ կարողացան այս ինչ կնոջն որսալ, նոյն իսկ պարծանքով պատմում են իրենց շրջանում:

Եթէ տղամարդն ուզում է մի հարսի ձեռք ձգել, մի առանձին տեղ հանդիպելիս աչքով է անում *):

Եթէ կինը նոյնպիսի նշանով պատասխանում է, նշանակում է համաձայն է, և այնուհետև որոշում են տեսակցութեան տեղը և ժամանակը:

Պատահում է, որ կինն է մոլորեցնում տղամարդին, այս դէպքում կինը նրան ծաղրում, զանազան ակնարկներ է անում, հայհոյում է, կամ տեսնելիս ճմլկոտում է և կամ թուելով տղամարդի զանազան պակասութիւնները, նրան բարկացնում է: Այս տեսակ միջոցներով կինը յայտնում է իւր

*) Աչքով անել՝ նշանակում է ձախ աչքի կոպերը միմեանց մօտեցնել և ապա բանալ, որով արտապատում են իրենց սէրը:

ցանկութիւնը, եթէ տղամարդին դուր է գալիս՝ առիթ է տալիս շարունակելու և խօսակցութիւնը հետզհետէ փոխւում է սիրային ականարկների և ապա որոշում են տեսակցութեան տեղը: Իսկ եթէ տղամարդին դուր չէ գալիս կնոջ ականարկները, մի սուր նկատողութեամբ վերջ է տալիս խօսակցութեանն և հեռանում:

Տեսակցութեան տեղերը լինում են գետերը, ուր կանայք գնում են լուացք անելու և երկու սիրահարներ նշանակած տեղը միմեանց հետ տեսակցում են:

Անտառները՝ ուր տղամարդիկ և կանայք գնում են պտուղներ ժողովելու:

Ուխտատեղիները, ուր մի քանի ընտանիք գիշերում են մի վրանի տակ:

Արտերը, ուր գնում են քաղհանելու:

Ջրաղացները:

Տները: Այլի կամ ամուսինն օտարութիւն գնացած կանայք սիրածի հետ շատ անգամ տեսակցութիւն են ունենում հէնց իրենց տներում, երբ արգելք չկայ:

Սիրահարական դէպքեր Վարանդայում հազիւ են պատահում: Գլխավորապէս սիրահարութիւններ տեղի են ունենում քիչ ու շատ հոգսերից ազատ երիտասարդների և հասակն առած աղջիկների մէջ:

Երկու սիրահարներ իրենց սէրը թաքցնում են ամէնքից, նոյն իսկ իրենց ծնողներից, որովհետեւ դէպի այդ տեսակները ժողովուրդը զգուանքով է վերաբերւում և երես առած են անուանում: Այդ է պատճառը, որ շատ անգամ այդ տեսակ սիրահարութեան վերջը եղբրական է լինում: Պատճառ՝ ծնողները բոլորովին անտեղեակ իրենց աղջկայ կամ տղայի սիրահարութիւնից՝ նշանում են իրենց ցանկացած անձնավորութեան հետ: Որդիները չեն համարձակւում իրենց սիրտը բանալ ծնողների առաջ և երբ տեսնում են այլ ևս հնար չկայ ազատուելու կամ ինքնասպանութիւն են գործում կամ թէ ծածուկ փախչում են սիրածի հետ:

Սիրահարական դէպքերի յաճախ չկրկնուելու պատճառ-

ուր կարելի է համարել նախ այն, որ Վարանդայում աղջիկներքն ամուսնացնում են վաղ: Ամուսնացող աղջիկների ամենամեծ տոկոսը կազմում է 13 տարիքը, իսկ նշան դնում են, ինչպէս վերև լիշեցի, աւելի վաղ 6—7 տարեկանում: Պարզ է, որ 12 տարեկան աղջիկը տակաւին տեղեկութիւն չունի կեանքից և չգիտի թէ ի՞նչ է սէրը, ուստի հեռու է նրա մտքից և սիրահարութիւնը:

Տղամարդիկ ևս մանուկ հասակից ծանրաբեռնուած լինելով ընտանեկան հոգսերով, ժամանակ չեն ունենում սիրահարութեան ետեւից ընկնելու:

Երկրի դիրքն ու կլիման ևս անմիջական ազդեցութիւն են ունենում:

Ահագին մինչև երկինք բարձրացող լեռները, թանձր և անմատչելի անտառները, շարունակ մշուշով պատած երկիրը, շարունակ տեղացող անձրևները ազդել են վարանդացու բնաւորութեան վրայ. նա դարձել է սառը, մտախոհ, լուրջ և լսնտարբեր դէպի շրջապատող առարկաները: Մարդը դարձել է իշխող և հրամայող, իսկ կինը հպատակուող և ենթարկուող:

Երբորդ՝ տղաները և աղջիկները միմեանց հետ քիչ յարակցութիւն ունին: Աղջիկը հասնելով 8 տարիքի կտրւում է դրսի ոշխարհից և փակւում տանը, իսկ դուրս ելնելուց աչքերը գետնին ձգած շտապում է գործին, ճանապարհին տղամարդ պատահելիս կամ փոխում է ճանապարհը և կամ երեսը դարձնելով դէպի հակառակ կողմը՝ քարացած կանգնում է մինչև տղամարդի անցնելը:

Բայց և այնպէս՝ այդ չէ խանգարում աղջիկներին աշխատել երիտասարդներին դուր գալու:

Աղջիկները սկսած ամենահարստից մինչև տմենաաղքատը մաքուր են հագնւում, հագուստներից կախում են դրամներ, մէջքին կապում են արծաթէ քամար, գլխներին ձգում են կարմիր դիպակ (չարդաթ), որպէս զի կտրմրութիւնը տայ երեսներին և գեղեցիկ երևան, քալում են սիգաճեմ, երկար ծամ են պահում և գեղեցիկ հիւսում, գօտին պինդ կապում

են, որպէս զի կուրծքը դուրս ցցուած երևալ: Աշխատում են ամօթխած երևալ և երիտասարդներին տեսնելիս երեսները դարձնում են գէպի պատը և աչքի տակով նայում:

Երիտասարդներն աղջիկներին դուր գալու համար իբրև միջոց գործ են դնում.

1. Երգելը. լաւ ձայն ունեցող և լաւ երգող երիտասարդին աղջկերքը շատ սիրում են:

2. Քաջութիւնը, որ երիտասարդները ցոյց են տալիս ջիւրիդի, գօտեմարտի, մահակ կռուի և այլ խաղերի ժամանակ: Լաւ պարելը, ճաշակով հագնուելը, ուսումն ևս մեծ դեր են խաղում այդ գէպքում:

Ամենից շատ դուր են գալիս աղջիկներին օտարութիւնից դարձած և նոր ձեւի հագնուած երիտասարդները. վերջիններս ոչ միայն աղջիկների ուշադրութիւնն են գրաւում, այլ և մայրերի նախանձն են շարժում, որոնք ամէն միջոց գործ են դնում իրենց փեսայացնելու:

Տղալ և աղջիկ միմեանց հետ տեսակցում են.

1. Բինտներում, ուր աղջիկները գնում են կաթ կամ իւղ բերելու, այնտեղ հանգիստւում են տաւարածներին և միմեանց հետ խօսակցում:

2. Եկեղեցիներում: Վարանդայում ջահել հարսներն ու աղջկերքը տարեկան երկու անգամ են եկեղեցի գնում: Ծաղկազարդին և Ութի-ուրբաթ գիշերը: Այդ երկու անգամ գիւղի աղջկերքը համարեա առանց բացառութեան գնում են եկեղեցի:

Երկու սիրահարներ այդ գիշեր փոքրիկ երեխայի միջոցով որոշում են տեսակցութեան տեղը և մինչդեռ շարունակում է ժամերգութիւնն՝ աղջիկն աննկատելի կերպով դուրս է գնում եկեղեցուց և շտապում տեսակցութեան տեղը:

3. Արտերում՝ քաղհան անելիս:

4. Այգիներում՝ թուփ թափելիս:

5. Անտառներում՝ պտուղներ ժողովելիս:

6. Միջատեղ, ուր հաւաքւում են բաւականին թուով աղջկերք և բուրդ գզում: Մի մհանով գալիս է երիտա-

սարգը և գէպի սիրած աղջիկը զանազան ակնարկներ անելով, յայտնում է իւր սէրը՝

7. Փողոցներում պատահելիս աղջիկը կանգ է առնում մինչև երիտասարդի անցնելը, իսկ վերջինս աղջկայ մօտովն անցնելիս մի բան ասում և հեռանում է։

8. Աղբիւրներում. ուր աղջիկները գնում են ջուր բերելու, իսկ երիտասարդները տանում են կենդանիներին ջրելու և այդ ժամանակ միմեանց հանդիպում են և սիրում։

Սիրահարութեան ժամանակ երբեմն զանազան սիրահարական երգեր են յօրինում և երգում, բայց սրանք գլխաւորապէս լինում են (թուրքերէն ^{*)})։

Սիրահար երիտասարդը ցանկանալով երկրորդ տնգամ սիրած աղջկայ հետ առանձին տեսնուել ու խօսել, իւր բարեկամ մի հարսի կամ աղջկայ յայտնում է ցանկութիւնը։ Միջնորդ հարսը մի մհանով վերցնում է որոշուած տեղը, ապա գալիս է տղան և իրեն ձեռքներով գործին բոլորովին անտեղեակ հարցնում է. «Ախլի թորներքբիս»։ «Հընչիդ ա, քիս

*) Առաջ բերենք այդ տեսակ երգերից մի քանի նմուշներ.

Տ Ղ ա Ն՝

Սարերը ձինը կոխալ ա,
 Բարհա, ես հոնց կեամ,
 Փողոց, փողոց պղնձի ա,
 Բարհա ես հոնց կեամ,
 Կտոր, կտոր, լուսնունկեալ ա,
 Բարհա ես հոնց կեամ,
 Ձեր պառաւը մըրթմըրթում ա,
 Բարհա, ես հոնց կեամ,
 Ձեր շոնը հալմալում ա,
 Բարհա ես հոնց կեամ,
 Ձեր որձակը ծկլթում ա,
 Բարհա ես հոնց կեամ,
 Ձեր դիօռնը, ճռճռում ա
 Բարհա ես հոնց կեամ,

Աղջիկը պատասխանում է.

«Սարերը ձինը կոխալ ա,
 Կանանչ թըլաւ եկ,

ընք սեհր ընելու, պատասխանում է միջնորդը և աւելացնում. «Մի հարս էլ չես պուհրում. թա մեզ նըհետ պերենք էս չիմաններս շոռ ածինք»:

«Իէ հօրա, մին աղչիկ ճարի օգիմ ըլի. բաս հինչիս բարեկամն ըս»:

— Եանի օգըմ ըս պսակուիս, ախչիկ չկալ:

«Բա որ օգիմ վուչ, կասիմ»:

— Դէ օգըմ ըս մեր Մընըշական լաւ ախչիկ չես ճըրըլաւան. եկ լհա օգի. ասում է միջնորդը և ցոյց տալիս ընկերուհուն:

Աղջիկն ամաչելուց սաստիկ կարմրում է և կմշտում հարսի կուռը:

«Ախչի եանի հինչ ըս կօռնըս կմշտում, մեր Գըսպարին անալ լաւ տղի ըս քըննական, հազըր բոլաւ, բուսաթաւ տղալ ա. ասում է միջնորդը և դառնալով տղային աւելացնում. «Աղաթըն ա նըշընծացու տղին ջուբումը բարեղան կնի, խը՝ մին զատ չըս տալիս մեզ»:

Տղան հանում է բերած մըգեղէնը, որ գլխաւորապէս լինում է տանձ, խնձոր, չամիչ, կաղին և կօնֆէտ, տալիս է իւր բարեկամ հարսին և խնդրում, որ ընկերուհու հետ բաժանի:

Միջնորդը մըգեղէնի մի մասը տալիս է աղջկան և աւելացնում. «Ինքառ ախչի, տեսնըմըս, որ քնաս մեր Գըս-

Փողոց, փողոց պղնձի ա,

Լէն կըրմնջաւն եկ:

Կտոր, կտոր լուսնըկեալ ա,

Մառէն շոքաւր եկ:

Մեր պառաւր մըրթմըրթում ա

Եանուց դըլուաւն եկ:

Մեր շոնը հալմալում ա,

Պատառը քցի եկ:

Մեր որձակը ծկլթում ա,

Կոտան քցի եկ:

Մեր դոռնը ճըլվըլդտում ա,

Տափանը եղէ, եկո:

պարին, էզան ստի զատեր կօտիս: Եթէ աղջիկը վերցնում է, արգէն համաձայնութեան նշան է և տղան գոհ սրտով թողնում հեռանում է:

Աղջիկը փոխարէնը նոյն միջնորդի միջոցով ուղարկում է տղային մի զաւուլ (փողի քսակ) մրգեղէնով լցրած, կամ իւր գործած մի գուլգ գուլգայ, իսկ Զատիկին նախշած ձու:

Ժողովուրդն ընդհանրապէս յարգում է աղջկայ պատիւը և ոչ մի կերպ թույլ չէ տալիս նրան անպատուել. նոյն իսկ ամուրի տղաները կոյս աղջիկների հասցէին ոչ մի խօսք չեն արտասանում, իսկ եթէ պատահում է որ տղաներից մէկը լետին մտքով մի որևէ իցէ աղջկայ մասին խօսում է, ընկերները իսկոյն նախատում և լռեցնում են:

Բայց եթէ աղջիկն արգէն խախտել է իւր կուսութիւնը, այնուհետև դառնում է ծաղրի և խօսակցութեան առարկայ: Հասարակութիւնը խիստ դատապարտում է այդպիսիներին, նրանից խօյս են տալիս նոյն իսկ իւր ընկերուհիները և ոչ մի յարաբերութիւն չեն ունենում հետը: Նա դառնում է ընտանիքի նախատինք և գիւղի տղաներից ոչ մէկը չի կամենում հետը ամուսնանալ: Ծնողները վերջապէս ստիպուած ամուսնացնում են կամ արքի մարդու, կամ երկու կին ունեցողի և կամ օտար գիւղացու հետ և իրենցից հեռացնում: Այս բոլորը կատարւում է այն ժամանակ, երբ աղջկայ վարմունքը յայտնւում է, իսկ երբ ծածուկ է մնում, մի մի անգամ անցնում է առանց հետեւանքի:

Իսկ եթէ տղան իմանում է, որ կինը նախ քան իւր հետ ամուսնանալը ուրիշի հետ յարաբերութիւն է ունեցել, հետեւանքը շատ վատ է լինում, կամ ուղղակի խեղտում, սպանում է, կամ լետ է դարձնում հօրանց տուն, կամ թէ կանչում է ծնողներին և յայտնում աղջկայ դրութիւնը, որից լետոյ տղան կամ բոլորովին մերժում է այդ տեսակ կնոջ հետ ապրել, կամ թէ մեծ փող ստանալով հաշտւում է:

Ա. Բ.